



**ԿԱՐԳ
ԳՎԱՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՍԱՆ**

(փոփոխություններով)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

1.1. Սույն կարգով սահմանվում են Գվառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ուսանողների կողմից ներկայացված բողոքների ընդունման, քննարկման և ամփոփման հիմնադրույթները:

1.2. Սույն կարգի դրույթները տարածվում են ԳՊՀ կրթական բոլոր ծրագրերով ուսումնառող, առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների վրա:

1.3. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկումը կատարվում է՝ համաձայն «Գվառի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի ընթացակարգային պահանջների:

1.4. Ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքների գնահատման արդյունքները, քննությունից (ստուգարքից) ստացած գնահատականը ֆակուլտետային և համալսարանական հանձնաժողովներին, որոնք կազմավորում է ԳՊՀ ռեկտորը:

1.5. Համալսարանական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

- ա) ռեկտորը (նախագահ),
- բ) ուսումնական գծով պրոռեկտորը (տեղակալ),
- գ) ռեկտորի օգնականը (քարտուղար),
- դ) համապատասխան ֆակուլտետի ղեկանը,
- ե) համապատասխան ամբիոնի վարիչը,
- զ) ակադեմիական քաղաքականության վարչության պետը,
- է) ԳՊՀ ուսխորհրդի նախագահը:

1.6. Ֆակուլտետային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

- ա) համապատասխան ֆակուլտետի ղեկանը (նախագահ),
- բ) համապատասխան ամբիոնի վարիչը,
- գ) ակադեմիական վարչության ներկայացուցիչը (քարտուղար),
- դ) քննող դասախոսը,
- ե) համապատասխան ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը:

1.7. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովներում կարող են ընդգրկվել համապատասխան ոլորտի մասնագետներ:

2. ԲՈՂՈՔԱՐԿՍԱՆ ԿԱՐԳԸ.

2.1. Կիսամյակային գիտելիքների գնահատման արդյունքները, ինչպես նաև քննաշրջանում և բաց դրների ժամանակահատվածում քննությունից (ստուգարքից) ստացած անբավարար կամ գիտելիքներին ոչ համապատասխան գնահատականը, ուսանողի գրավոր դիմումի համաձայն

բողոքարկվում է ֆակուլտետային հանձնաժողովում՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Եթե ուսանողը քննությունը հանձնել է գրավոր, ապա հանձնաժողովը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը սահմանված չափանիշներին:

2.3. Եթե ուսանողը քննությունը հանձնել է բանավոր, ապա հանձնաժողովը ուսանողի գիտելիքները ստուգում է տվյալ առարկայի ծրագրի ամբողջ ծավալով:

2.4. Գիտելիքների գնահատման արդյունքները հանձնաժողովը ստուգում է այն մասով, որն ուսանողը բողոքարկում է:

2.5. Ֆակուլտետային հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,

բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):

2.6. Բողոքարկման արդյունքը կարող է կրկնակի բողոքարկվել համալսարանական հանձնաժողովում՝ ֆակուլտետային հանձնաժողովի եզրակացությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

2.7. Ուսանողի գիտելիքների գնահատման բողոքը քննարկվում է համալսարանական հանձնաժողովի կողմից նաև այն դեպքում, երբ տվյալ դասընթացը դասավանդող դասախոսը համապատասխան ֆակուլտետի ղեկանը կամ ամբիոնի վարիչն է:

2.8. Համալսարանական հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,

բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):

2.9. Համալսարանական հանձնաժողովի որոշումը վերջնական է:

2.10. Գիտելիքների գնահատման կամ ակադեմիական պարտքերի երկրորդ լուծարքի հանձնման արդյունքների հիման վրա (անբավարար առաջադիմության հիմքով) ԳՊՀ-ից ուսանողի հեռացման մասին համապատասխան ֆակուլտետի ղեկանի կողմից ներկայացված զեկուցագիրը կարող է բողոքարկվել ԳՊՀ համալսարանական հանձնաժողովին՝ զեկուցագիրը ԳՊՀ ռեկտորին հանձնելու պահից երկու աշխատանքային օրերի ընթացքում:

2.11. Համալսարանական հանձնաժողովը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, քննարկելով բողոքարկումը (ուսանողի ցանկության դեպքում՝ նրա ներկայությամբ)՝ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) բավարարել բողոքը և անվավեր ճանաչել ուսանողի հեռացման մասին ռեկտորի հրամանի նախագիծը,

բ) մերժել բողոքը և ուսանողի հեռացման մասին ռեկտորի հրամանը թողնել ուժի մեջ:

3. Բողոքարկման ամփոփումը.

3.1. Բողոքարկման հանձնաժողովները կազմում են գրավոր արձանագրություններ, որոնք կցվում են քննական կամ ստուգարքային տեղեկագրերին: Գնահատականի փոփոխման դեպքում քննական տեղեկագրում և ստուգարքային գրքույկում կատարվում է համապատասխան գրառում:

3.2. Բողոքարկման արդյունքների մասին ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը զեկուցում է ԳՊՀ ռեկտորատի, իսկ համալսարանական հանձնաժողովի նախագահը՝ ԳՊՀ գիտխորհրդի հերթական նիստի ժամանակ:

3.3. Բողոքարկման արդյունքում, երբ համալսարանական հանձնաժողովի գնահատմամբ ուսանողի գնահատականը ակնհայտորեն չի համապատասխանում նրա գիտելիքներին, քննող դասախոսի պատասխանատվության հարցը քննարկվում է ԳՊՀ գիտխորհրդի նիստում: